

Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո

Հեռավոր 1935-ին Տաթեւ գյուղում ուսուցչություն էր անում Սերո Խանզադյանը: Հասցրել էր ճանաչելի դառնալ, եղբ, օրերից մի օր, նրա կիսամութ սենյակ է մտնում գյուղի մեծ նամեն՝ մի մեռոն մասունք տատիկ, եւ խաչակնքելով ասում. «Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո»: Ապա ավելացնում. «Գրով շենանա տունը Յայոց» եւ Սերո Խանզադյանին մեկնում մի ձեռագիր մատյան...»

Տատի խոսքերը, կարծես, ողջ հայ ժողովրդի անունից էին հնչում եւ, ասես, ողջերթի խոսքեր էին սկսնակ գրողին:

Յարյուր տարի անց վերստին համոզվում ենք, որ Սերո Խանզադյանի հայտնությունը հայոց հոգեւոր-մշակութային անդաստանում նվիրագործված երեւութ է եղել:

Եվ հարյուր տարի անց կրկնում ենք մեռոն-մասունք այդ տատի խոսքերը. «Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո»:

Ես ուրախ եմ եւ հպարտ, որ կարողացել եմ (ճակատագրի կամոք) գրողի կյանքի վերջին շրջանում լինել նրա մտերիմների ու մերձավորների թվում, արժանանալ նրան ընկեր ու բարեկամ լինելու պատվին՝ չնայած մեր տարիքային մեծ տարբերությանը:

Բավարարված եմ, որ նրա մահվանից հետո վերջ դրեցինք գրողի մայրաքաղաքային ու գորիսյան առանձնատների շուրջ ծագած անորոշություններին, իսկ գորիսի առանձնատունը դարձրինք տուն-թանգարան, որ ներկայումս հիմնանորոգվում է:

Ուրախ եւ հպարտ եմ նաև, որ Գորիսում հավերժացրինք նրա հիշատակը՝ քաղաքի փողոցներից մեկը եւ թիվ 6 համրակորթական դպրոցը կոչելով գրողի անվամբ, որի բակում, մեր ժամանակի լավագույն քանդակագործներից մեկի՝ Գետիկ Բաղրամյանի ծեռամբ, կանգնեցվեց հայ ժողովրդի նշանավոր զավակի կիսանդրին:

Գիտակցում ենք, միաժամանակ, որ անելիք ունենք գրողի մայրաքաղաքային առանձնատան նպատակային օգտագործնան, գրողի հիշատակի հավերժացուն ավարտին հասցնելու, անտիպները տպագրելու, իսկ լավագույն ստեղծագործությունները վերահրատարակելու, գրական ամբողջ ժառանգությունը վերագնահատելու եւ նորովի արժեւորելու ուղղությամբ:

Գրողի հորեւյանը հետադարձ հայացքի առիթ է տալիս, եւ այսօր, մտովի թերթելով Ս.Խանզադյանի վաստակի լավագույն էջերը, դժվար է չիհանալ նրա մտքի ընդգրկումների լայնությամբ, չսքանչանալ նրա ստեղծած գրական հերոսների պատկերասրահով:

Նրա պատկերացմանը՝ գրականությունը մարդու համար է եւ կոչված է նրան բարձրացնելու, հավատ ներշնչելու դեպի սեփական եռթյունը: Նման գիտակցումով էլ ստեղծագործեց մինչեւ կյանքի վերջը եւ մնաց հայ գրականության առաջին շարքում:

Սերո Խանզադյանը մեր հողի եւ ժողովրդի կենսագիրն էր ու համարձակություն ունեցավ միշտ էլ ձեռք զարկել իրականության շիկացած հարցերին:

Իրավացի էր Յամո Սահյանը, երբ ասում էր՝ Սերո Խանզադյանը քայլող պատմություն է: Եվ նա ժողովրդի անցյալից վերցնում էր ոչ թե մոխիրը, այլ՝ կրակը: Դրա լավագույն արտահայտություններից է «Մսիթար Սպարապետ»-ը՝ հայ պատմավիպասանության շքեղ փայլատակումներից մեկը:

Սերո Խանզադյանը, լինելով Ակսել Բակունցի արժանավոր գրական շառավիղը, շարունակեց գեղարվեստականացնել մեր լեռնաշխարհի ավանդույթներն ու պատմությունը: Յիշատակելի է հատկապես «Մատյան Եղելությանց» վեպը, որի մեջ բակունցյան նրբագեղությամբ մարմնավորված է պատերազմական եւ հետպատերազմյան շրջանի գորիսը՝ իր նարդկանցով, ճակատագրերով ու անկրկնելի գույներով:

Նրա նվիրական երազն Արցախն ու Նախիջեւանն ազատագրված տեսնելն էր: Եվ իր ազգային, հասարակական-քաղաքական գործումնեության իիմնական ուղղություններից մեկը հենց այդ էր:

Արցախյան հերոսամարտի օրերին հասցրեց ընթերցողին ներկայացնել «Անդրանիկ» (1989թ.), «Շուշի» (1991թ.), «Նժդեհ» (1993թ.) վեպերը՝ կրկին ոգեկոչելով ազգային ոգին ու կերտվածքը, վերստին քաջալերելով պատերազմ մեկնող հայ ազատամարտիկներին:

Սերո Խանզադյանն իր հավերժական հանգստարանը գտավ հայոց մեծերի պանթեոնում, սակայն նրա արմատներն ու հոգին մնացին մեր լեռնաշխարհում, բայց ոչ իբրև անցյալ, ոչ իբրև հուշ, այլ հայոց հողն ու ազգը զորացնող ներկայություն:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սյունիքի մարզպետ